

նէութիւնը, սակայն անուրանալի է նրա ահագին հեղինակութիւնը իր ժամանակակիցների վրայ և կատարած գերը մեր նոր կեանքի հոսանքների մէջ:

Աւելորդ է ասել որ հրատարակութիւնը գեղեցիկ է և մեծ խնամքով կատարուած, մի բան որ յատուկ է պ, Լէօի լոյս ընծայած բոլոր գրքերին:

Մ. Սմբատ Գարիբեդեան՝ «Հայկական ձգնաժամն եւ վերածնունդն», Պոսթոն, 1905 թ., գինն է թղթակազմ՝ 50 սէնթ. լաթակազմ, 75 սէնթ:

Ներկայ երկասիրութեանս նպատակն է վերլուծել մեր ազգային վերջին փորձառութիւններն և նշանակել անոնցմէ բղխող կենսական դասերը», ասուած է գրքի առաջաբանում: Հայերիս վերջին 25 տարիների կեանքը շատ աւելի հարուստ էր ցնորքներով և խելագարօրէն խիզախ ճիգերով, քան մեր առանձնայատուկ պայմանների գիտակցութեամբ և մեր ոյժերի նպատակայարմար գործադրութեամբ: Այժմ, կարծես, սկսել ենք աւելի լուրջ և քննադատաբար վերաբերուել մեր կացութեան և անելիքին: Գարբիէլեանի գրքի մանաւանդ քննադատական մասը արժանի է իւրաքանչիւր ոչ նախապաշարուած և խորհող հայի առանձին ուշադրութեան: Պակաս համոզիչ են նրա գրքի վերջին գլուխները, որոնց մէջ փորձուած է «գործունութեան մեթոդ» և «ազգային նկարագիրներ» պարզելու:

Ա.-յո՝ «Հայրենիքի կարօսը», 1905, Պետերբուրգ, 5 կոպէկ:

«Հայրենիքի կարօսը» թրքահայ գաղթականների կեանքից քաղուած մի պատկեր է, որի ոչ նիւթն է նոր և ոչ էլ գոյները:

Ձուլումից փախած գաղթական Մուրադը վճուում է մուրալ հիւանդութիւնից հարկադրուած: Պատահում է սովորականը—վիրաւորում են Մուրադին. «Անբեմաներ... լսկեց «դախլի» ետևից մի խուպոտ ձայն: Այդ բառը խայթեց Մուրադի սիրտը: Գրդի սրի խայթոցը աւելի տանելի էր, քան այդ բառը:»

Ու Մուրադը՝ իրան հասցրած վիրաւորանքից սաստիկ վրդովուած՝ ընկնում է անկողին. երազում նրա առաջ պատկերանում է հայրենի գիւղը, նախկին խաղաղ ու երջանիկ կեանքը, ապա, քրդերի ձեռքով յանկարծ հայրենի օջախի քար ու քանդ լինումը: Արթնանալով՝ նա գտնում է իր գլխի վերև

համագիւղացի Ապրօին, որին թախանձում է վերադառնալ հայրենիք:

Ու հիւանդը՝ երկրի կարօտից ձգուած՝ ճանապարհ է ընկնում, Ապրօյի հետ դէպի արիւնոտ, բայց միշտ ըղձալի վաթանք...

Ա. Զանեանցի՝ «Երկու պատկեր», 1905, Բագու, 10 կողէկ:

Գիւղական և գործարանային կեանքի այս երկու պատկերները մեղանշում են և՛ լեզուի և՛ ճաշակի տարրական կանոնների դէմ: Մեր սկանակ գրողները դեռ ևս չըմբռնեցին այն հասարակ, ակնյայտ ճշմարտութիւնը, որ առանց որոշ աստիճանի պատրաստութեան, անկարելի է հրապարակ իջնել: Ապա թէ ոչ ծիծաղելի են դառնում և՛ իրանք, և այն ցեղի գրականութիւնը, որի գործաւորները ուզում են լինել: Օր. եթէ պ. Զանեանցը քիչ ու շատ հայերէնի տեղեակ լինէր, այս տեսակ աղաղակող սխալներ չէր անի:

«Մույլ և վիթխարի դէի պէս ինչպէս մի սև ուրուական». սա ասուած է գիւղի համար: Եթէ գիւղը նմանեցնուած է դնւ-ի, էլ ի՞նչպէս այդ դէր միաժամանակ կարող է ուրուական լինել. տարբեր բան էր եթէ ասէր. «մույլ և վիթխարի դէի, ուրուականի պէս և այլն»: Յետոյ նոյն գիւղը նրկարագրելիս տեսէք թէ ի՞նչեր է ասում. «մույլ և վիթխարի դէի պէս ինչպէս մի սև ուրուական, յոգնած մրզուած կեանքի դաւերից, պարփակուած անհամար վշտի մէջ վիզը ծուռ, ընրանը ըաց, օձապտոյտ մէջքը թէք ընկած էր և այլն»:

«Վիզը ծուռ» գիւղ՝ ինչ որ է, բայց «բերանը ըաց» գիւղ: Պ. Զանեանցը իսկապէս շատ հարուստ երևակայութիւն ունի՛ Բայց սրանք դեռ ոչինչ: Պ. Զանեանցը կոռուցնում է մի մօր՝ որի միակ որդին հիւանդ է—Աստուծոյ հետ և նրա բերանում դնում է այս կարգի անէծքներ: «Ո՞ր հարևանիս փիսութիւն արի, ասս, թէ ճիշտ է եկ աչքս հանի... Անջիգեար Աստուած... ողորմութիւնդ գլխիդ խռով կենս, ինձ երբ կ'ողորմես... պարտական մնաս... թախտդ ցրիւ գայ... Մրատես Աստուած աչքդ բռունանջ... ան գեալուր Աստուած...»

Այս բոլորի վրայ աւելացրէք և այն, որ գիրքը տպուած է սարսափելի սխալներով, որոնց գլխաւորները միայն ուղղել են ձեռքով: